

**ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼԱԲՈՐԱՆԹԵԿՏՈՍԻԱՅԻՑ ՀԵՏՈՒ
ՀԻՊՈԹԱԼԱՍՈՒՄԱՅԻՆ ՊՐՈԼԻՆՈՎ ՀԱՐՈՒՄՏ ՊԵՊՏԻԴԻ ԵՎ ԿՈՐՐԱՅԻ
ԹՈՒՅՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴԱՍՏԱԿԱՅԻՆ ԿՈՄՊԵՆՍԱՑԻԱՅԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ**

**Խալաչի Ն.¹, Համբարձումյան Լ.Է.², Մելիքսեթյան Ի.Բ.², Չավուշյան Վ.Ա.²,
Սարգսյան Վ.Յ.², Սարգսյան Ջ.Ս.³**

¹ Ուրմիայի բժշկական գիտությունների համալսարան, Իմամի հոսպիտալի ամբիոն,
Ուրմիա, Իրան

² ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ, ՀՀ, Երևան

³ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ԳՀԿ, ՀՀ, Երևան

Միակողմանի լաբիրինթեկտոմիայից (ՄԼ) հետո անդաստակային կոմպենսացիայի (ԱԿ) խնդիրները և չբացահայտված մեխանիզմները դեռևս պահպանել են իրենց արդիականությունը: ՄԼ-ից հետո վերականգնման դիսամիկայում դիտարկվել է հիպոթալամուսի պրոլինոլ պեպտիդի

(PRP-1) և կորրայի թույլի (NOX) ազդեցությունը Դեյտերսի լատերալ անդաստակային կորիզի (ԼԱԿ) նեյրոնների վրա: Ի պատասխան հիպոթալամուսի սուպրասպինալային (ՍՕԿ) և պարավենտրիկուլային (ՊՎԿ) կորիզների երկկողմանի բարձրահաճախ խթանման, ուսումնասիրվել են նեյրոնների վաղ և ուշ տետանիկ, հետտետանիկ պոտենցիալները: Սպայկային ակտիվության վերլուծությունը կատարվել է ծրագրային On-line փաթեթով: Կառուցվել են համալիր, միջինացված նախա-և հետագդակային հիստոգրամներ: ԱԿ-ի վաղ շրջանում Դեյտերսի կորիզի նեյրոններում բացահայտվել է արգելակող և դրդիչ ռեակցիաների բարձրացում PRP-1 և NOX ներարկումից հետո և ուշ շրջանում ռեակցիաները մոտեցել են նորմային: Ավելին, հետխթանիչ ակտիվացումն ավելի արտահայտիչ է բարձրահաճախ (100 Հց) խթանման ժամանակ: Հիստոքիմիական ուսումնասիրությունը կատարվել է Ca^{2+} -կախյալ թթու ֆոսֆատազայի բացահայտման եղանակով: ՄԼ-ով և PRP-1 ստացած կենդանիների Դեյտերսի կորիզի նեյրոններում նկատվում է կենտրոնական քրոմատոլիզի գարգացում, որը բերում է խորը, նեյրոդեգեներատիվ փոփոխությունների, ընդհուպ վերջիններիս լրիվ անհետացում: ՄԼ ենթարկվելուց և PRP-1 ներարկումից հետո ֆերմենտային ակտիվությունը պահպանվում է 19 օրվա ընթացքում և այն ավելի վառ արտահայտված է ԼԱԿ-ի վնասված կողմի նեյրոններում: Ինտակտ կողմում PRP-1 ներարկումը բերում է ֆոսֆորիլացման բարձրացման, որը բնորոշ է այն նեյրոններին, որոնք վերապրում են խորը սթրես: Մորֆոլոգիական տվյալները, որոնք առնչվում են NOX-ի կիրառման հետ, թույլ են տալիս ենթադրել, որ մի քանի խոշոր նեյրոններում տեղի են ունենում կյութափոխանակության խանգարումներ, որոնք խորը դեգեներացիայի արդյունք են: Մորֆոլոգիական պատկերը ցույց է տալիս, որ NOX-ի կիրառման պայմաններում դիտարկվում է բարձր ակտիվություն, սակայն դա կարող է լինել ֆերմենտային ակտիվության ինտենսիվության վերացման հետևանք, ինչպես նաև, վնասված նյարդային հյուսվածքի պուլսիֆիկացիայի խթանում և ադապտացիայի միտում: Այսպիսով, NOX-ի պաշտպանական ազդեցությունը ՄԼ-ից հետո ակնհայտ է: Սակայն էֆեկտներն ավելի արտահայտիչ են և հաճախ գերազանցում են նորմայի մակարդակը, որոնք մատնանշում են նրանց ոչ նորմալ արտահայտվածությունը: Չցանկանալով թերազնահատել NOX-ի էկզոգեն բնույթի կարևորությունը, կարող ենք պնդել PRP-1-ի բնական և արդյունավետ էֆեկտը, որպես էնդոգեն կենսաբանական խթանիչ: